



ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Պ. Ս. Լորենյիս «Նորայր Բյուզանդացու անտիպ գրական ժառանգությունը» խորագիրը կրող, Շվեդիայից գրած, սույն թղթակցությունը, մի նամակի հետ միասին, ուղարկել էր Նզդիպանայ թեմի Առաջնորդ Գերապատիվ Ս. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանին: Նզդիպանայ թեմի Առաջնորդը, թե՛ իրեն հասցեագրված նամակի և թե՛ սույն թղթակցության պատենները, ուղարկել էր Վեհափառ Հայրապետին— նրա բարեհաճությամբ «էջմիածին» ամսագրում տպագրելու համար: Փոքր կրճատումներով ստորև հրապարակում ենք թե՛ Գերապատիվ Ս. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանին հասցեագրված նամակը և թե՛ թղթակցությունը:

ԳՐԱՊԼԱՏԻՎ Ս. ՄԱՄԲՐԵ ԱՐԽԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ

Գաճիք— Նզդիպան

Գերապատիվ հայր,

Ներկա նամակիս միակ նպատակն է հայտնի դարձնել մեր հասարակությանը Նզդիպանայ թեմի, ինչպես նաև ամենուրեք, որ XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին տասնհինգ ամիսների մեր ականավոր մատենագետ Նորայր Բյուզանդացու մի ամբողջ գրական անտիպ ժառանգությունը գոյություն ունի հեռավոր Շվեդիայում, ուր երեսուն և երկու տարի նա միանգամայն կորած ու մոռացության էր տրված (1915 թվից, Նորայրի մահվան տարուց, մինչև այսօր): Ներկայից ուղարկում եմ Նորայր Բյուզանդացու ինքնագիրը, ֆրանսերեն լեզվով, կտակի պատճենը, որը ես ստացել եմ Ֆրեդրիկա-Բրեմեր-Ֆորբունդետ շվեդական կանանց բարեգործական ընկերությունից, որին մեր Նորայրը— մոռանալով որ հայ ժողովուրդը գոյություն ունի աշխարհիս երեսին և ինքն էլ այդ հայության մեկ զավակն է— կտակել էր իր ամբողջ կարողությունը:

1. Կանխիկ դրամագույն— Մեկ հարյուր և քսանհինգ հազար շվեդական քրոնն և այդ դրամագույնը այսօր այդ ընկերությանը բերում է տարեկան հինգ—վեց հազար քրոնն տոկոս—եկամուս:

2. Իր անձնական գրական-գիտական գրադարանը, կազմված հայագիտությանը նվիրված ընտիր գրքերից—հայերեն, ֆրան-

սերեն, իտալերեն, շվեդերեն, տաճկերեն, հունարեն, ասորերեն և այլ լեզուներով:

3. Իր հեղինակած ֆրանսերեն-հայերեն հայտնի բառագրից մեկ հազար օրինակ:

4. Իր միանգամայն պատրաստ տպագրության և անավարտ ձեռագրերը, որոնք դժբախտաբար անխնամ են պահվել և շատ ձեռագրեր էլ կորել են. իմ ուսումնասիրած ու ձեռքով էլ փաթաթած և կապած ձեռագրերի քանակությունը հասնում է քառասուն և չորս կապոցների: 1915—1946 թ. թ. ընթացքում Նորայրի այս ձեռագրերը ընկած են եղել շվեդական կանանց բարեգործական ընկերության, Աստված գիտե, որ նկուղներում, անխնամ վիճակում, առանց տեղեկություն ունենալու նրանց գրական-գիտական արժեքի մասին, մինչև իմ գրավոր բողոքները, թե չի կարելի մի մեծ հայագետ գիտնականի, ինչպես և շվեդական կանանց բարեգործական ընկերության բարերարի, ձեռագրերի հետ վարվել այնպես, ինչպես վարվում էին թուրքական բարբարոսները մեր մայր երկրում, հայերեն ձեռագրերը համարելով մի ֆրատրա տը պապին:

Ներկա նամակիս կցում եմ նաև մի թղթակցություն Նորայր Բյուզանդացու անտիպ գրական ժառանգությունը խորագրով:

տեղական հայ պարբերաթերթերում զետեղելու համար, որպեսզի հայ հասարակությունը, թե Եգիպտոսում և թե մյուս երկրներում, ծանոթանա թե ինչպիսի կարևոր անտիպ աշխատություններ են մնացել մեր մեծ հայրենակցի մահվանից հետո այս հեռավոր ու ցրտաշունչ երկրում, իրենց հրատարակմանը սպասելով: Նորայրի անտիպ գրական ժառանգությունը այսօր իրենից ներկայացնում է մի խառնիճաղանձ ձեռագրակույտ, առանց դասավորման. մատիտով արված դիտողությունները արդեն անընթեռնելի են դառնում, ջնջվում են, թերթերը շորանում ու փշրվում են, ձեռագրերից ավազի անձրև է տեղում, երբ ձեռքդ ես վերցնում թերթելու, կարդալու համար: 1923 թվին հրավիրվել էր տեղական Լուսին համալսարանի մի շվեդ ուսանող, Լա-Ֆոնթեն ֆրանսական ազգանունով, որը առանց հայերենի այլևս իսկ իմանալու մի այնպիսի ապուր էր պատրաստել Նորայրյան ձեռագրերից, որ այսօր, այդ ձեռագրերը կարգի բերելու և դասավորելու համար, պահանջվում է գրեթե մի ամբողջ տարվա աշխատանք: Իմ այս նամակին կցված քաղվածքում, որտեղ ես թվել եմ ձեռագրերի միայն մի մասի մեքենայական, կարելի է դադարաբեկ կազմել Նորայր Բյուզանդացու ձեռագրերի արժեքի ու նրանց նշանակության մասին, ինչպես և այն «խնամքի» մասին, որին նրանք արժանացել են 32 տարվա ընթացքում:

Ուղարկված համալսարանական գրադարանում, ուր իմ պահանջով Գեոտեբորգից տեղափոխվել էին Նորայրի ձեռագրերը, ես ամիսներ շարունակ զբաղվել եմ դրանց ուսումնասիրությամբ. թերթի, եմ մոտ Բալն հատուկ, յուրաքանչյուրը 325—1400 էջից բաղկացած, մաքուր ատտագրված Նորայրի ձեռքով և կազմված: Այդ ձեռագրերը նմուշված են հայ հին, մեծ ու փոքր, մատենագիրների գործերին և պատրաստված են ուղղակի տպարան ուղարկվելու համար: Ամիսների շարունակ, մի առանձին սիրով ես ուսումնասիրել եմ Նորայրի ձեռքով արտագրված և հայ նշանավոր բանաստեղծների — Քուլակի ու մյուսների, գրչին պատկանող

տաղերի տասնյակ վարիանտներ, որոնց հավաքման ու խմբագրման վրա նա աշխատել է 20—25 տարի, ամենուրեք ժողովելով միջնադարյան հայ տաղերի անտիպ ու տպագիր բոլոր վարիանտները: Ես թերթի եմ Նորայրի մոտ 130 զանազան անուն-խորագիր կրող մեծ ու փոքր ձեռագրերը և չեմ կարողանում հաշվել այն մտքի հետ, թե նրան մինչև կուրության աստիճանը հասցնող այս ձեռագրերը պետք է կորսվեին, նրա մյուս ձեռագրերի նման, եթե պատահաբար միայն չպահվեին որպես ֆրատրա տր պապին:

Որպես հայ իրականությունից կտրված ու հեռավոր Սկանդինավիայում գտնվող մի հայ մտավորական, ես պարտք համարեցի հաղորդել Ձեզ մեր Նորայր Բյուզանդացու անտիպ ահագին գրական ժառանգության գոյության մասին, միանգամայն վստահ ու համոզված, թե Առաջնորդարանդ կանի ամեն հնարավորը՝ Բյուզանդացու ձեռագրային այս ժառանգությունը կորստից փրկելու համար:

Ցանկալի է, որ Եգիպտոսյան թեմի Առաջնորդարանդ իր վրա վերցնի նախաձեռնությունը՝ ստեղծելու Նորայր Բյուզանդացու գրական անտիպ ժառանգության հրատարակական ֆոնդ:

Շարունակելով Նորայրյան անտիպ երկերի հրատարակության խնդիրը Առաջնորդարանը պետք է շվեդական կանանց բարեգործական ընկերությունից պահանջի որպեսզի Ձեզ ուղարկվի Նորայր Բյուզանդացու ձեռագրերը, ոոոնք ապօրինաբար անքն, են Գեոտեբորգի քաղաքային գրադարանին:

Ոչ մի կերպ չպետք է համաձայնվել այն մտքի հետ, որ Նորայր Բյուզանդացու հայերեն ձեռագրերի, նրա գրական ժառանգության խնդիրը շվեդական մի հիմնարկության սոսկ «ենթեքին գործն» է հանդիսանում. Բյուզանդացու գրական-գիտական ժառանգության միակ օրինավոր ժառանգորդը հանդիսանում է հայ ժողովուրդը և նա պետք է տեղի կանգնի ու պահանջի իրեն վերադարձնել հայտնաբերված ձեռագրերը:

Խորին հարգանքներով՝ Ս. ԼՈՐԵՆՏԻ

1947 թ. 8 հուլիսի

Ուպսալա

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ

1945 թվի նոյեմբերին ես ընկա Ուպսալա քաղաքը, նրա հայտնի համալսարանական գրադարանում, — Գաբրիելա Բուրիլիվա, — իմ գրական զբաղումներս շարունակելու հա-

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

մար: Մանկությունից ինձ հայտնի էր, որ XIX դարի վերջի քառորդի և XX դարի առաջին տասն և հինգ տարիների մեր ականավոր հայագետ Նորայր Բյուզանդացին

ապրել է Ստոկհոլմում, ամուսնացած լինելով մի շվեդուհուհետ: Բնականաբար, չէի կարող չհետաքրքրվել նրա թողած գրական-գիտական անտիպ ժառանգությամբ, թե արդյոք չէ՞ր թողել նա հայագիտության վերաբերյալ ձեռագիր աշխատություններ և ի՞նչ էին արել կամ ի՞նչ էին մտադիր անելու այդ ձեռագրերի նկատմամբ Նորայրի «շվեդացած» (ինչպես ենթադրում էի) ժառանգները:

Շնորհիվ Ուպսալայի համալսարանական դրաղարանի տեսուչ, փիլիսոփայության դոկտոր Անդրեաս Գրապեի, որին այստեղ հրապարակով իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում իր ցույց տված օգնության համար, ինձ հաջողվեց պարզել Նորայրյան գրական-գիտական անտիպ ժառանգության ամբողջ մեծությունը և նրա վիճակի անմխիթարությունը:

Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գաղեղյան—Ճիզմեճյան—Թերզյան ծնված 1845 թվին Ն. Պոլսում) մահացել է 1915 թվին Վենետիկում, ուր ապրում էր 1903 թվից սկսած, իր կնոջ՝ Սելմա Նորայրի մահվանից հետո (1899 թ.): Նրա աճյունը 1924 թվի դեկտեմբերին, մահվանից իննրորդ տարի հետո, Վենետիկից փոխադրվել է Ստոկհոլմ ու թաղվել սեփական ճաշակով իր իսկ կառուցած գերեզմանոցում:

Նորայրը ժառանգ չէր թողել և Ֆրեդրիկա-Բրեմեր-Ֆորբուսդեի կանանց բարեգործական ընկերության Ստոկհոլմի կենտրոնին էր կտակել իր ամբողջ կարողությունը, որ իր ժամանակին շատ խոշոր նվիրատվություն էր հանդիսանում:

1. Դրամագրութս.— մեկ հարյուր և քսանհինգ հազար շվեդական քրոնն, որը այսօր մեծահարուստ կանանց ընկերությանը բերում է հինգ հազար քրոններից ավելի տարեկան տոկոս-եկամուտ:

2. Իր անձնական գրական-գիտական գրադարանը,— կազմված մեկ հազարից ավելի հայագիտության վերաբերյալ ընտիր հատորներից— հայկոեն, շվեդերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, տաճկերեն, հունարեն, ասորերեն և այլ լեզուներով:

3. Իր հեղինակած հայտնի ֆրանսերեն-հայերեն բառագրից մեկ հազար օրինակ:

4. Իր բոլոր ձեռագրերը գրեթե բացառապես հայերեն և հայ գրականությանը վերաբերող:

Մեզ հայերիս հետաքրքրողը միայն Նորայր Բյուզանդացու ձեռագրերը կարող էին լինել, և ես իմ ուշադրությունը լարեցի այդ ուղղությամբ՝ պարզելու համար նրանց որտեղ գտնվելը, քանակը և որակը:

Հայ այսօրվա հասարակության հին սերնդին պատկանող մտավորականներին ավելորդ է ասել, թե ո՞վ էր Նորայր Բյուզանդա-

ցին: Սակայն, ավելորդ չենք համարում հիշեցնել մեր այսօրվա երիտասարդ սերնդին, որ մեր այդ հայտնի հայագետի մտավոր գործունեության նպատակն էր— տալ հայ մատենագիրների մի վերաքննված գիտական նոր հրատարակություն, սկսած հինգերորդ դարի մեր հեղինակներից մինչև 17-րդ դարի ստորին հայերենի հեղինակները: Մի հոյակապ ու հանդուգն ձեռնարկություն, որի համար կպահանջվեր մի ամբողջ հաստատության և շատ տասնյակ գիտնականների երկարատև ջանքեր: Նորայրը խորացնելով մեր անցյալի այդ հազար խելո հարյուր տարվա գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունը, իր գիտական եզակի կարողությունների շնորհիվ ուղղել էր տասն հազարից ավելի սխալ ընթերցում կամ սխալ արտագրություն (տրանսկրիպսիոն) մեր գրագիրների: Ահազին մի գործ, որ Նորայրից պահանջել էր կենդանի անդադրում գրական աշխատանք,— աշխատանք մինչև կուրացում: Նորայր Բյուզանդացու գիտական հեղինակությունը հայագիտության բնագավառում մեծ էր ինչպես մեզ մոտ, այնպես էլ օտարերկրյա բոլոր այն գիտնականների մոտ, որոնք դատվում էին համեմատական լեզվաբանությամբ և այդ առթիվ նաև հայագիտությամբ: Եվրոպացի հայտնի լեզվագետներն ու հայագետները, ինչպես Մյուլլերը՝ Վիննայից, Կարրիերը՝ Փարիզից, Թեզան՝ Պառիզից, Ն. Մառը՝ Պետերբուրգից և ուրիշները, հետաքրքրվում էին Նորայրի կարծիքով հայագիտության ամենախոնձրձմած հարցերի առթիվ: Երկու անգամ (1899 և 1903 թ. թ.) Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը Նորայրին հրավիրել է Ստոկհոլմից Կովկաս տեղափոխվել և էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ու այլ կենտրոնների հայկական ձեռագրերի բաղադատությամբ ձեռնամուխ լինել հայ մատենագիրների հրատարակության գործին, սկսելով Աստվածաշնչի գիտական հրատարակությունից՝ էջմիածնի Մատենադարանում գտնվող Աստվածաշնչի քառասուն հին ձեռագիր օրինակների համեմատության հիման վրա: Այս բոլորը արած են մեզ Նորայր Բյուզանդացու գրված տեղի մասին մեր V—XVII դարերի գրագիրների ուսումնասիրության բնագավառում, հազար երկու հարյուր տարվա մեր գրականության ու պատմության խորագնդին քննություն գործում:

Նորայրի ձեռագրերը, նրա մահվանից հետո, անցել էին Ֆրեդրիկա-Բրեմեր-Ֆորբուսդեի կանանց բարեգործական ընկերության Ստոկհոլմի կենտրոնին և 1915 թվից մինչև 1922 թվի վերջը գտնվել են այդ ընկերության նկուղներում, իսկ 1923 թվից մինչև

զրա գտնվում էին Գեոտեբորգ քաղաքի գրադարանի նկուղներում, առանց որևէ ցուցակագրության ու դասավորման, որպես թղթերի մի կույտ արկղները լցված:

«Մանի» արկղ ձեռագրեր է թողել Նորայր Բյուզանդացին,— Աստված գիտե, մի բան միայն պարզ է, որ բոլոր ձեռագրերը չեն գտնված և ղգալի կորուստներ կան: Նույնիսկ այն ձեռագրերի ու արկղների մասին, որոնք իմ բուռն բողոքներից հետո գտնվել են Գեոտեբորգում, տեղեկություն չունեմ գրադարանի վարչությունը: Գեոտեբորգ քաղաքի գրադարանի վարչությունը ոչ միայն դադարի արժանի չունեմ այդ ձեռագրերի արժեքի մասին, այլև մոռացել էր նրանց գոյության մասին: Նորայրյան ձեռագրերի ողբալի վիճակը միանգամայն անաշուտ կերպով ներկայացնելու համար ես այստեղ բերում եմ 1946 թվի հոկտեմբերին ինձ հասցեագրված պաշտոնական նամակից մի փոքրիկ հատված:

«Սեպտեմբերի մեկին թե 2-ին ստացել եմ Ձեր ապահովագրյալ նամակը, որին ես չեմ պատասխանել մինչև այժմ: Իհարկե, ես չպետք է սպասեի այսքան երկար, և ես խնդրում եմ ինձ ներել: Զիշտն ասած ես գտնում էի Ձեր նամակի մեջ որոշ մանրամասնություններ, որոնք ինձ զարմացնում էին սկզբում և որոնք մի փոքր կորցնել ալին իմ սառնասրտությունը՝ հակառակ իմ ցանկության, այժմ ես ուզում եմ խնդրել Ձեր ներողամտությունը: Դժբախտաբար քղերի մեծագույն մասը այն ժամանակ գտնվում էր վերնահարկի մի անկյունում, գրքերից մեծ տարածությամբ հեռու: Դուրս գալիս երբեք գտնվում էին շատ քիչ ձեռագրեր: Ձեռագրերի մեծագույն մասը գտնվում էր արկղի մեջ, որի գոյությունը մասին ես գաղափար չունեի: (Ընդգծումները ամենուրեք իմն են. Ս. Լ.):

Այս բոլորը չի արդարացնում այն, որ ես գործել եմ մի խոշոր սխալ, ենթադրելով թե քառ քիչ ձեռագրեր կան: Եվ հավատացնում եմ Ձեզ, որ ես ուրախությամբ իմացա ձեռագրերի մեծ քանակության գոյության մասին, ինչպես նաև այն արժեքի մասին, որ դուք տալիս եք այդ ձեռագրերին:

Ինձ անհրաժեշտ է հաղորդել Ձեզ դարձյալ մի գաղափարի ջանք: Այն հավաքածուն ձեռագրերի, որ այժմ գտնվում է Ուպսալայում, քննվելով չէ, քանի որ վերջերս գտնվել է մի մեծ արկղ, ամբողջապես լի Նորայրի թղթերով: Ես այն ուղարկել եմ տվել Ուպսալա, որտեղ նրանք գտնվում են Ձեր տրամադրության տակ:

Ձրանսերեն լեզվով գրված այս նամակի հեղինակը Պ. Սեթ Հալլբերգն է, Գեոտեբոր-

գի քաղաքի գրադարանի քստնամյա (1927—1947) վարիչը, որը տեղյակ չէ թե իր հաստատության մեջ ինչ է կատարվում:

Նրանց պարտականությունն էր պահել պահպանել ամեն մի ձեռագիր, մասնավորապես մի բարերարի ձեռագրերը, որը 125 հազար քրոնն էր նվիրել շվեդական բարեգործական ընկերությանը: Ահա այսպես է պահվել 32 տարի Նորայրի գրական անտիպ ժառանգությունը: Դեռևս 1883 թվին Նորայր Բյուզանդացին իր մտերիմ բարեկամ, շվեդ հայտնի գիտնական Ալմիքլիստին, որը Ուպսալայի համալսարանի համեմատական լեզվագիտության պրոֆեսորն էր, Ստոկհոլմից գրում էր, թե հասունացել է ժամանակը Ուպսալայի համալսարանում ստեղծելու հայագիտության ու հայ լեզվի ամբիոն: Պետք է ցավել միայն, որ Նորայրը իր խոշոր նյութական միջոցները չէր նվիրաբերել Ուպսալայի համալսարանին՝ իր այս տենչացած նպատակին ծառայեցնելու համար, ինչպես և իր գրադարանն ու ձեռագրերը, այլ ձեռագրերը վստահել էր կանանց բարեգործական մի այնպիսի ընկերության, որը ոչ մի կապ չունեմ առհասարակ գիտության և մասնավորապես հայագիտության հետ: Փաստերը ցույց են տալիս, որ այդ ընկերությունը չի կարողացել գեթ իր բարերարի ձեռագրերը խնամել այնպես, ինչպես հարկավոր է, ցուցակագրել գրանք ու գիտությունը հայտնի դարձնել գրանց գոյություն մասին:

Հայ հասարակությանը Նորայր Բյուզանդացու անտիպ գրական ժառանգության մասին գաղափար տալու համար ես կրավականանամ ստորև թվելով նրա ձեռագրերի վերնագրերը միայն, որպեսզի շատից ավելի չերկարի թղթակցությունս:

1. Բառագիրք Ստոկհոլմի Հայերէնի և մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարերուայ. հինգ մեծ հատորներ, մաքուր արտագրված, տպագրության պատրաստ:

Առաջին հատորը՝ Ա, Բ, Գ գրերը.— 1038 էջ.

Երկրորդ հատորը՝ Դ, Ե, Չ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ գրերը.— 1157 էջ.

Երրորդ հատորը՝ Խ, Մ, Կ, Զ, գրերը.— 1478 էջ.

Չորրորդ հատորը՝ Չ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո գրերը.— 1461 էջ.

Հինգերորդ հատորը՝ Ո, Չ, Պ գրերը.— 738 էջ.

(Ձեռագրերի մեջ ես չգտա շարունակությունը, թեև Նորայրը ուղղակի նկատում է, թե այս բառարանը դեռևս 1890-ական թվականներին ավարտված, պատրաստ էր տպա-

գրության: Այս հոյակապ աշխատանքը նա սկսել էր 1884 թվի հուլիսի 10-ին Ստոկհոլմում):— 6000 էջից բաղկացած գործ:

2. Եզերի կողբացի.— 235 էջ.

3. Առաքելի Սինեցոյ տաղաչափութիւնք.— 85 էջ (մեծադիր, գրեթե պարբերական թերթի մեծութեամբ):

4. Հայ Պարտէզ.

5. Վերապիկ յԱստուածաշունչ գիրս (ժընունդի և այլն).

6. Եւթի Պամփիլիա ժամանակակեանք. երկամասեայ ի հայերէն. թարգմանութիւն է եղել ի յուն բնագրէ ի ձեռն Սրբոց թարգմանչաց և այլն:

7. Փաստա Քիզանդացոյ Պատմութիւն Հայոց թարգմանեալ յԱստուծոյն.

8. Ժողովրդական միջոցներ անասունների ցաների դէմ.

9. Հագարայ Փարպեցոյ Պատմութիւն և բուրբ առ Վահան Մամիկոնեան.

10. Եղիշէի (և ոչ Մամբէի) ճառ ի Յարութիւն Հագարայ.

11. Հայ բուսակ կամ Հայկական բուսաբանութիւն.— նորանոր ուղղումներ—վարիանտներ (Նորայրը պատրաստում էր նոր տպագրութիւնը).

12. Արեւմտ Երէց.— 327 էջ.

13. Հակոբայ Արեւցոյ ճառք.— 329 էջ.

14. Թուրք դաշանց.

15. Ամիրդավար.— Օգոստ բժշկութեան.

16. Ամիրդավար.— Անգիտաց անպէտ.

17. Պատմութիւն Աշուանից.— շորս հատոր (327 էջ, ապիլի քան 315 էջ, ապիլի քան 361 էջ, ապիլի քան 366 էջ).

18. Աշխարհացոյց Վարդանանց Վրայի.

19. Տեսիլ Սբ. Սահակայ.

20. Մովսէս Խորենացի.

21. Բառագիրք աբղի հայերէնի (գաւառական հայերէնի).— սկսված դեռևս Կ. Պոլսում

22. Կ. Ոսկերբերանի 1. Մեկնութիւն գաղա-տացոյ.

2. » եպիսեպոսոյ

3. » Ա. Թեա-ղոնիկեցոյ.

23. Թովմա Արծրունի և անանուն Արծրունի.— երկու ալ և ալ պատմագիրք.

24. Փիլոն և Ոսկերբերան.

25. Բարսեղ Կեսարացի.

26. Մովսէս Խորենացի և առաջին թարգմանիչ.

27. Դիաղութիւնք ի տաղագիրն Ոսկերբերանի Եսայի մեկնութեան.

28. Գրիգոր Մագիստրոսի Բաշ Կալէտիկոսի և Ներմուն Սոփիատոսի բանատարր և սխալեւանիս թղթաց օրինակ չորս ի խրատ և այլն.— կազմած տետր 518 էջ.

29. Հատընտիր տաղարան Հայ բանաստեղծութեանց ի դարուն ժի—ծէ որն ունի հետեւյալ բաժինները.

Մասն առաջին.— տաղք ուրախականք («ուրախականք»-ը շնչված և վերեր գրված է սթափականք).

Մասն երկրորդ.— տաղք սիրոյ.

Մասն երրորդ.— տաղք հոգեւորականք.

Մասն Չորրորդ.— տաղք աշխարհականք.

Մասն Հինգերորդ.— տաղք պատմականք.

Մասն Վեցերորդ.— տաղք ուսումնականք.

Մասն Եօթերորդ.— տաղք հայկականք.

30. Յանելուած տաղից Նահապետի Քուչակի, Յովհաննէս Երզնկացոյ և այլոց:

Ես բավականանում եմ այս երեսուն խորագրերի մեջ բերումով, թեև կարող եմ շարունակել և թվել հոսպատիկն ու քառաստիկը Նորայրայն ձեռագրերի ամեն կարգի խորագրերի: Սակայն վերը թվածներն արդեն ցույց են տալիս թե որքան մտավոր աշխատանք կա թարգմանում նրանց վրա և ինչպիսի արժեք է ներկայացնում Նորայր Բյուզանդացու թողած անտիպ գրական ժառանգութիւնը:

Իմ թղթակցութեանս միակ նպատակն էր հայ հասարակութեան և հայ բանասերների ուշադրութիւնը հրավիրել Նորայր Բյուզանդացու մահվանից հետո 32 տարի մոռացութեան մատնված նրա անթիվ անտիպ աշխատութիւնները գոյութեան վրա հեռավոր Շվեդիայում: Աշխատութիւններ, որոնց միակ ու օրինավոր տեղը հայ ժողովուրդն է: Ցավալի, շատ ցավալի կլինի, եթե Նորայրայն մտքի պրպտումները տարնյակ տարիներ ևս անհայտ մնան հայ գիտական մտքին:

Եթե հայ գրական ու գիտական հասարակութիւնը մի ելք չգտնի Նորայրայն ձեռագրերը սկանդինավյան սառնամանիքներից իր մայրենի միջավայրը փոխադրելու, այն հայ մշակութի զարգացմանը ծառայեցնելու նպատակով, ապա էլ ո՞վ պետք է այդ մասին մտածե, օտարնե՞րը, որոնց ոչ սրտին և ոչ էլ մտքին ոչինչ չեն ասել ու ոչինչ չեն ասում Նորայր Բյուզանդացի երկու բառը:

Ս. ԼՈՐԵՆՏԻ

